



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հունիսին /վերլուծություն/

2004թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8291 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հունիսի համեմատ աճել է 39.9 %-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 8.1 %-ով:

2004թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3366 օտարման գործարքների 91.0 %-ը կազմել են առուվաճառքները, 8.1%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.6%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հունիսին, 2003թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 34.8%-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 10.3 %-ով: 2004թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1052 առուվաճառքի գործարքների 65.5%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում քաղաքում, 2003թ. հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 14.5 %-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ աճել՝ 0.1 %-ով:

2004թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. հունիսին համարժեք է 543.9 դրամի /

| Համայքներ                           | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հունիսին /ԱՄՆ դոլար/ | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/ |               |              |
|-------------------------------------|---|---|---------------|--------------|
|                                     |   | հունիս 2003թ.   | հունիս 2004թ. | մայիս 2004թ. |
| Կենտրոն                             | 250.0-970.0   | 387.3   | 456.8         | 450.5        |
| Արաբկիր                             | 200.0-560.0   | 274.7   | 359.1         | 351.7        |
| Քանաքեռ-Զեյթուն                     | 130.0-330.0   | 172.0   | 222.6         | 217.5        |
| Նոր-Նորք                            | 115.0-250.0   | 130.1   | 189.1         | 183.5        |
| Ավան                                | 120.0-190.0   | 127.6   | 180.7         | 174.6        |
| Էրեբունի                            | 120.0-300.0   | 143.8   | 176.5         | 175.8        |
| Շենգավիթ                            | 120.0-250.0   | 137.0   | 208.4         | 200.6        |
| Դավթաշեն                            | 130.0-260.0   | 163.6   | 225.7         | 220.4        |
| Աջափնյակ                            | 120.0-250.0   | 138.7   | 204.6         | 198.3        |
| Մալաթիա-Սեբաստիա                    | 120.0-250.0   | 139.6   | 205.3         | 199.2        |
| Նուբարաշեն                          | 65.0-100.0  | 65.8  | 79.1          | 75.8         |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | 65.0-970.0  | 170.9   | 228.0         | 222.5        |

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հունիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.5%, իսկ տարեկան աճը 33.4%:

2004թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 491 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. հունիսի համեմատ աճել է 34.2%-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 15.8%-ով:

2004թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

| Մարզեր             | Քաղաքներ           | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հունիսին /ԱՄՆ դոլար/ | Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/ |               |              |
|--------------------|--------------------|---|---|---------------|--------------|
|                    |                    |   | հունիս 2003թ.   | հունիս 2004թ. | մայիս 2004թ. |
| <b>Արագածոտն</b>   | <i>Աշտարակ</i>     | 22.0-95.0   | 62.3  | 63.2          | 63.2         |
|                    | <i>Ապարան</i>      | 18.0-40.0   | 27.2  | 33.1          | 32.0         |
|                    | <i>Թային</i>       | 18.0-40.0   | 25.0  | 31.2          | 30.5         |
| <b>Արարատ</b>      | <i>Արտաշատ</i>     | 22.0-88.0   | 54.3  | 55.8          | 55.8         |
|                    | <i>Մասիս</i>       | 20.0-90.0   | 54.4  | 59.9          | 58.9         |
|                    | <i>Վեդի</i>        | 20.0-45.0   | 31.5  | 41.5          | 39.8         |
|                    | <i>Արարատ</i>      | 22.0-50.0   | 31.5  | 38.6          | 36.6         |
| <b>Արմավիր</b>     | <i>Վաղարշապատ</i>  | 35.0-102.0  | 84.0  | 88.9          | 86.5         |
|                    | <i>Արմավիր</i>     | 21.0-58.0   | 45.5  | 54.7          | 50.0         |
|                    | <i>Մեծամոր</i>     | 17.0-50.0   | 30.6  | 32.6          | 32.6         |
| <b>Գեղարքունիք</b> | <i>Սևան</i>        | 20.0-50.0   | 30.5  | 33.5          | 32.9         |
|                    | <i>Գավառ</i>       | 20.0-50.0   | 30.2  | 33.6          | 32.8         |
|                    | <i>Մարտունի</i>    | 18.0-38.0   | 29.5  | 34.1          | 34.0         |
|                    | <i>Վարդենիս</i>    | 10.0-21.0   | 17.0  | 17.5          | 17.3         |
|                    | <i>Ճամբարակ</i>    | 13.0-30.0   | 16.0  | 17.9          | 17.9         |
| <b>Լոռի</b>        | <i>Վանաձոր</i>     | 30.0-90.0   | 60.8  | 62.3          | 62.3         |
|                    | <i>Ստեփանավան</i>  | 20.0-48.0   | 33.1  | 35.6          | 34.3         |
|                    | <i>Սյիտակ</i>      | 17.0-40.0   | 23.8  | 35.9          | 34.0         |
|                    | <i>Ալավերդի</i>    | 15.0-40.0   | 25.4  | 25.8          | 25.8         |
|                    | <i>Տաշիր</i>       | 15.0-28.0   | 19.3  | 24.2          | 23.0         |
| <b>Կոտայք</b>      | <i>Աբովյան</i>     | 40.0-110.0  | 83.5  | 89.5          | 89.0         |
|                    | <i>Նոր Հաճն</i>    | 35.0-75.0   | 51.8  | 59.6          | 58.9         |
|                    | <i>Բյուրեղավան</i> | 15.0-45.0   | 35.2  | 38.2          | 37.5         |
|                    | <i>Եղվարդ</i>      | 28.0-55.0   | 40.3  | 44.8          | 44.2         |
|                    | <i>Հրազդան</i>     | 18.0-55.0   | 30.6  | 37.5          | 34.5         |
|                    | <i>Ծաղկաձոր</i>    | 22.0-95.0   | 75.3  | 80.5          | 75.9         |
|                    | <i>Չարենցավան</i>  | 13.0-55.0   | 30.9  | 36.8          | 35.0         |
| <b>Շիրակ</b>       | <i>Գյումրի</i>     | 30.0-100.0  | 71.6  | 72.3          | 72.2         |
|                    | <i>Արթիկ</i>       | 17.0-45.0   | 25.2  | 29.6          | 28.5         |
|                    | <i>Մարայիկ</i>     | 15.0-33.0   | 23.5  | 27.6          | 26.5         |
| <b>Սյունիք</b>     | <i>Գորիս</i>       | 21.0-45.0   | 29.6  | 35.8          | 34.8         |
|                    | <i>Կապան</i>       | 18.0-52.0   | 28.9  | 33.8          | 33.1         |
|                    | <i>Միսիան</i>      | 17.0-37.0   | 27.5  | 32.6          | 32.0         |
|                    | <i>Մեղրի</i>       | 18.0-58.0   | 25.0  | 25.4          | 25.3         |
|                    | <i>Ազարակ</i>      | 18.0-50.0   | 21.7  | 25.2          | 25.2         |
|                    | <i>Քաջարան</i>     | 13.0-30.0   | 18.3  | 19.5          | 18.9         |
| <b>Վայոց Ձոր</b>   | <i>Վայք</i>        | 15.0-48.0   | 35.2  | 35.3          | 35.3         |
|                    | <i>Եղեգնաձոր</i>   | 20.0-58.0   | 46.8  | 47.2          | 47.0         |
|                    | <i>Ջերմուկ</i>     | 18.0-50.0   | 41.0  | 41.1          | 41.1         |
| <b>Տավուշ</b>      | <i>Դիլիջան</i>     | 15.0-54.0   | 36.1  | 38.9          | 36.3         |
|                    | <i>Իջևան</i>       | 23.0-60.0   | 40.3  | 45.5          | 43.5         |
|                    | <i>Բերդ</i>        | 15.0-43.0   | 29.1  | 30.3          | 29.3         |
|                    | <i>Նոյեմբերյան</i> | 15.0-45.0   | 26.6  | 27.4          | 27.2         |

2004թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսեկան աճը կազմել է 2.5%, իսկ տարեկան աճը՝ 10.5%:

2004թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 476 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 94, մյուս մարզերում միասին վերցրած՝ 382: 2004թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 2.1%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 6.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 1.1%-ով: 2003թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 42.9 %-ով, ընդ որում Երևանում նվազել է 6.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 64.6%-ով:

2004թ. հունիսին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

| Համայնք                                  | Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հունիսին /ԱՄՆ դոլար/ | Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/ |               |              |
|--|--|---|---------------|--------------|
|  |  | հունիս 2003թ.   | հունիս 2004թ. | մայիս 2004թ. |
| <u>Կենտրոն</u>                           | 255.0-990.0  | 390.0   | 470.8         | 462.5        |
| <u>Արաբկիր</u>                           | 205.0-580.0  | 277.0   | 380.6         | 354.6        |
| Քանաքեռ-Զեյթուն                          | 140.0-360.0  | 174.0   | 224.1         | 219.4        |
| Նորք-Մարաշ                               | 120.0-390.0  | 292.0   | 335.9         | 331.9        |
| Ավան                                     | 125.0-200.0  | 129.0   | 187.2         | 176.8        |
| Էրեբունի                                 | 130.0-320.0  | 145.0   | 183.0         | 177.0        |
| Շենգավիթ                                 | 120.0-260.0  | 138.0   | 209.8         | 201.2        |
| Դավթաշեն                                 | 140.0-260.0  | 165.0   | 229.0         | 221.6        |
| Աջափնյակ                                 | 125.0-230.0  | 140.0   | 210.6         | 199.8        |
| Մալաթիա-Սեբաստիա                         | 125.0-250.0  | 141.0   | 208.5         | 200.7        |
| Նուբարաշեն                               | 65.0-110.0   | 68.0  | 80.1          | 76.2         |
| <b>Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/</b> | <b>65.0-990.0</b>  | <b>187.2</b>  | <b>247.2</b>  | <b>238.3</b> |

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. հունիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 3.7%, իսկ տարեկան աճը՝ 32.1%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

| Մարզեր      | Քաղաքներ    | Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հունիսին /ԱՄՆ դոլար/ | Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/ |               |              |
|-------------|-------------|---|--|---------------|--------------|
|             |             |   | հունիս 2003թ.  | հունիս 2004թ. | մայիս 2004թ. |
| Արագածոտն   | Աշտարակ     | 60.0-110.0  | 82.4   | 84.5          | 83.4         |
|             | Ապարան      | 20.0-60.0   | 38.7   | 38.9          | 38.9         |
|             | Թալին       | 20.0-65.0   | 28.1   | 33.2          | 30.9         |
| Արարատ      | Արտաշատ     | 50.0-90.0   | 61.6   | 62.1          | 62.0         |
|             | Մասիս       | 50.0-90.0   | 62.4   | 63.2          | 63.0         |
|             | Վեդի        | 25.0-65.0   | 36.2   | 43.5          | 40.5         |
|             | Արարատ      | 20.0-60.0   | 37.3   | 39.9          | 37.6         |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 70.0-120.0  | 89   | 90.3          | 90.2         |
|             | Արմավիր     | 35.0-90.0   | 52.1   | 55.9          | 52.7         |
| Գեղարքունիք | Սևան        | 20.0-60.0   | 36.3   | 36.4          | 36.4         |
|             | Գավառ       | 20.0-60.0   | 39.8   | 39.9          | 39.9         |
|             | Մարտունի    | 20.0-55.0   | 33.7   | 36.3          | 35.1         |
|             | Վարդենիս    | 15.0-45.0   | 21.1   | 21.3          | 21.3         |
|             | Ճամբարակ    | 15.0-40.0   | 18.6   | 20.2          | 20.1         |
| Լոռի        | Վանաձոր     | 50.0-90.0   | 68.1   | 69.8          | 69.7         |
|             | Ստեփանավան  | 15.0-60.0   | 33.3   | 37.3          | 35.1         |
|             | Սպիտակ      | 20.0-55.0   | 24.1   | 37.9          | 34.3         |
|             | Ալավերդի    | 15.0-50.0   | 25.7   | 26.8          | 26.0         |
|             | Տաշիր       | 15.0-40.0   | 19.8   | 25.8          | 23.3         |
| Կոտայք      | Արուսյան    | 60.0-120.0  | 92.2   | 93.1          | 93.0         |
|             | Նոր Հաճն    | 40.0-80.0   | 54.2   | 61.3          | 59.3         |
|             | Բյուրևան    | 25.0-60.0   | 38.1   | 39.7          | 38.2         |
|             | Եղվարդ      | 30.0-60.0   | 47.1   | 47.7          | 47.6         |
|             | Հրազդան     | 25.0-60.0   | 39.8   | 40.6          | 40.5         |
|             | Ծաղկաձոր    | 60.0-100.0  | 84.8   | 87.9          | 85.8         |
|             | Չարենցավան  | 20.0-55.0   | 33.3   | 38.4          | 35.8         |
| Շիրակ       | Գյումրի     | 60.0-120.0  | 90.4   | 91.6          | 91.6         |
|             | Արթիկ       | 15.0-50.0   | 28.5   | 30.1          | 28.7         |
|             | Մարալիկ     | 15.0-50.0   | 23.9   | 28.7          | 26.9         |
| Սյունիք     | Գորիս       | 20.0-60.0   | 31.4   | 37.5          | 35.7         |
|             | Կապան       | 20.0-60.0   | 30.9   | 34.9          | 34.7         |
|             | Սիսիան      | 20.0-55.0   | 28.4   | 33.8          | 32.4         |
|             | Մեղրի       | 15.0-40.0   | 28.1   | 28.2          | 28.2         |
|             | Ագարակ      | 15.0-40.0   | 24.1   | 27.9          | 27.4         |
| Վայոց Ձոր   | Վայք        | 20.0-60.0   | 36.9   | 37.0          | 37.0         |
|             | Եղեգնաձոր   | 25.0-65.0   | 49   | 49.4          | 49.3         |
|             | Ջերմուկ     | 25.0-65.0   | 43   | 43.4          | 43.4         |
| Տավուշ      | Դիլիջան     | 20.0-60.0   | 39.1   | 40.2          | 39.2         |
|             | Իջևան       | 30.0-65.0   | 41   | 46.6          | 43.9         |
|             | Բերդ        | 20.0-55.0   | 30.7   | 31.2          | 30.9         |
|             | Նոյեմբերյան | 20.0-55.0   | 30.6   | 30.8          | 30.8         |

2004թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.3%, իսկ տարեկան աճը՝ 6.1%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 538.98 հա /այդ թվում 14.01 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 435.87 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 531.12 հա հողերի /այդ թվում 13.14 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 430.05 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 7.10 հա /այդ թվում 0.29 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ , որից 5.82 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Օտարված 0.75 հա /այդ թվում 0.58 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով բնակավայրերի հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակման գործարքներ : Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում` 153.47 հա, որից 127.73 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Չեռական սեփականություն հանդիսացող   |               |                                      |               |                                |               | Մասնավոր սեփականություն հանդիսացող  |               |                                      |               |                                |               |
|-----------------|-------------------------------------|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|-------------------------------------|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|
|                 | Գյուղատնտեսական նշանակության հողերի |               | Բնակավայրերի հողեր                   |               |                                |               | Գյուղատնտեսական նշանակության հողերի |               | Բնակավայրերի հողեր                   |               |                                |               |
|                 |                                     |               | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |                                     |               | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի |               | հասարակական կառուցապատ. հողերի |               |
|                 | Քանակը                              | Մակերեսը /հա/ | Քանակը                               | Մակերեսը /հա/ | Քանակը                         | Մակերեսը /հա/ | Քանակը                              | Մակերեսը /հա/ | Քանակը                               | Մակերեսը /հա/ | Քանակը                         | Մակերեսը /հա/ |
| Երևան           | 0                                   | 0.00          | 13                                   | 1.64          | 9                              | 0.95          | 0                                   | 0.00          | 69                                   | 6.59          | 6                              | 3.96          |
| Արագածոտն       | 1                                   | 1.00          | 1                                    | 0.01          | 0                              | 0.00          | 48                                  | 30.15         | 28                                   | 2.58          | 0                              | 0.00          |
| Արարատ          | 41                                  | 95.98         | 144                                  | 15.00         | 2                              | 1.00          | 97                                  | 31.76         | 44                                   | 3.54          | 0                              | 0.00          |
| Արմավիր         | 2                                   | 2.07          | 0                                    | 0.0           | 0                              | 0.0           | 71                                  | 124.87        | 27                                   | 2.49          | 0                              | 0.0           |
| Գեղարքունիք     | 0                                   | 0.00          | 1                                    | 0.16          | 0                              | 0.00          | 2                                   | 6.12          | 3                                    | 0.21          | 0                              | 0.00          |
| Լոռի            | 0                                   | 0.00          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 10                                  | 15.62         | 6                                    | 0.41          | 1                              | 0.002         |
| Կոտայք          | 0                                   | 0.00          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 158                                 | 88.14         | 127                                  | 12.96         | 0                              | 0.00          |
| Շիրակ           | 0                                   | 0.00          | 1                                    | 0.003         | 1                              | 0.29          | 14                                  | 12.47         | 9                                    | 0.36          | 0                              | 0.00          |
| Սյունիք         | 0                                   | 0.00          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          | 14                                  | 17.63         | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          |
| Վայոց Ձոր       | 1                                   | 0.12          | 6                                    | 1.34          | 0                              | 0.00          | 2                                   | 0.39          | 0                                    | 0.00          | 0                              | 0.00          |
| Տավուշ          | 0                                   | 0.00          | 4                                    | 0.24          | 0                              | 0.00          | 8                                   | 3.74          | 5                                    | 0.45          | 0                              | 0.00          |
| <b>Ընդամենը</b> | <b>45</b>                           | <b>99.17</b>  | <b>170</b>                           | <b>18.39</b>  | <b>12</b>                      | <b>2.24</b>   | <b>424</b>                          | <b>330.89</b> | <b>318</b>                           | <b>29.59</b>  | <b>7</b>                       | <b>3.96</b>   |

2004թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի 981 առուվաճառքի գործարքներ, որից 469-ը` գյուղատնտեսական նշանակության, 507-ը` բնակավայրերի, 4-ը` արդյունաբերական օբյեկտների, և 1-ը` հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ:

2004թ. հունիսին հողերի առուվաճառքներից 220-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 15-ը` Երևանում /1.70 հա/, իսկ 205-ը` մյուս մարզերում /161.40 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 44 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /97.67 հա/, 165-ը` /18.00 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 7-ը` հասարակական կառուցապատման /1.23 հա/, 3-ը` արդյունաբերական նշանակության /6.20 հա/ և 1-ը /40.00 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2004թ. հունիսին հանրապետությունում վաճառվել են 4 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր` 3 միավոր /6.20 հա/ Արարատի և 1 միավոր /0.70 հա/ Շիրակի մարզերում:

2004թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 469 գործարքներ, այդ թվում աճուրդով 44, դատարանի վճռով 2 և ուղղակի վաճառքի միջոցով 1 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների |                |   |              |       | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի առուվաճառքների |                |  |              |        |
|---------------------------------------|--|----------------|---|--------------|-------|--|----------------|--|--------------|--------|
|                                       | Քանակը   | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |       | Քանակը   | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |        |
|                                       |  |                | Նվազագույն  | Առավելագույն | Միջին |  |                | Նվազագույն   | Առավելագույն | Միջին  |
| <b>Արագածոտնի մարզ</b>                |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Աշտարակ                               |  |                |   |              |       | 40   | 15.40          | 840.0  | 10000.0      | 2675.0 |
| Ապարան                                |  |                |   |              |       |  |                | 130.0  | 1150.0       | 420.0  |
| Թալին                                 | 1  | 1.00           | 840.0   | 840.0        | 840.0 | 5  | 6.09           | 200.0  | 1680.0       | 465.0  |
| Ծաղկահովիտ                            |  |                |   |              |       | 2  | 8.42           | 170.0  | 2100.0       | 270.0  |
| <b>Արարատի մարզ</b>                   |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Արտաշատ                               | 20   | 50.72          | 25.0  | 3070.0       | 780.0 | 47   | 10.50          | 740.0  | 10000.0      | 2115.0 |
| Մասիս                                 |  |                |   |              |       | 27   | 10.86          | 400.0  | 8500.0       | 1400.0 |
| Վեդի                                  | 20   | 43.76          | 95.0  | 2475.0       | 595.0 | 23   | 10.40          | 450.0  | 7200.0       | 1285.0 |
| <b>Արմավիրի մարզ</b>                  |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Արմավիր                               |  |                |   |              |       | 12   | 37.40          | 650.0  | 4650.0       | 1320.0 |
| Բաղրամյան                             | 2  | 2.07           | 248.0   | 260.0        | 254.0 | 24   | 71.49          | 130.0  | 1200.0       | 500.0  |
| Վաղարշապատ                            |  |                |   |              |       | 35   | 15.98          | 980.0  | 14000.0      | 2220.0 |
| <b>Գեղարքունիքի մարզ</b>              |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Գավառ                                 |  |                |   |              |       |  |                | 420.0  | 1100.0       | 635.0  |
| Ճամբարակ                              |  |                |   |              |       |  |                | 100.0  | 500.0        | 200.0  |
| Մարտունի                              |  |                |   |              |       |  |                | 100.0  | 4000.0       | 750.0  |
| Սևան                                  |  |                |   |              |       |  |                | 100.0  | 1000.0       | 385.0  |
| Վարդենիս                              |  |                |   |              |       | 2  | 6.12           | 60.0   | 1180.0       | 270.0  |
| <b>Լոռու մարզ</b>                     |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Այվերդի                               |  |                |   |              |       |  |                | 360.0  | 5500.0       | 850.0  |
| Գուգարք                               |  |                |   |              |       | 2  | 1.17           | 500.0  | 6000.0       | 1760.0 |
| Սպիտակ                                |  |                |   |              |       |  |                | 500.0  | 3300.0       | 1000.0 |
| Ստեփանավան                            |  |                |   |              |       | 5  | 4.66           | 180.0  | 4000.0       | 460.0  |
| Տաշիր                                 |  |                |   |              |       | 3  | 9.79           | 100.0  | 400.0        | 250.0  |
| <b>Կոտայքի մարզ</b>                   |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Աբովյան                               |  |                |   |              |       | 83   | 12.72          | 520.0  | 14000.0      | 5100.0 |
| Եղվարդ                                |  |                |   |              |       | 55   | 19.67          | 380.0  | 10000.0      | 3420.0 |
| Հրազդան                               |  |                |   |              |       | 20   | 55.75          | 250.0  | 6000.0       | 820.0  |
| <b>Շիրակի մարզ</b>                    |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Ախուրյան                              |  |                |   |              |       | 13   | 10.56          | 550.0  | 1200.0       | 700.0  |
| Ամասիա                                |  |                |   |              |       |  |                | 80.0   | 525.0        | 185.0  |
| Անի                                   |  |                |   |              |       |  |                | 240.0  | 800.0        | 280.0  |
| Աշոցք                                 |  |                |   |              |       |  |                | 60.0   | 210.0        | 150.0  |
| Արթիկ                                 |  |                |   |              |       |  |                | 140.0  | 800.0        | 300.0  |
| <b>Սյունիքի մարզ</b>                  |  |                |   |              |       |  |                |  |              |        |
| Գորիս                                 |  |                |   |              |       | 4  | 6.42           | 200.0  | 1600.0       | 460.0  |

|                 |   |      |       |       |       |    |       |       |        |        |
|-----------------|---|------|-------|-------|-------|----|-------|-------|--------|--------|
| Կապան           |   |      |       |       |       |    |       | 120.0 | 2000.0 | 330.0  |
| Մեղրի           |   |      |       |       |       |    |       | 400.0 | 4240.0 | 840.0  |
| Սիսիան          |   |      |       |       |       | 10 | 11.21 | 90.0  | 1500.0 | 320.0  |
| Վայոց Ձորի մարզ |   |      |       |       |       |    |       |       |        |        |
| Եղեգնաձոր       | 1 | 0.12 | 185.0 | 185.0 | 185.0 | 2  | 0.39  | 260.0 | 4000.0 | 2150.0 |
| Վայք            |   |      |       |       |       |    |       | 120.0 | 3400.0 | 900.0  |
| Տավուշի մարզ    |   |      |       |       |       |    |       |       |        |        |
| Բերդ            |   |      |       |       |       | 2  | 0.93  | 100.0 | 2000.0 | 650.0  |
| Իջևան           |   |      |       |       |       | 6  | 2.81  | 530.0 | 4000.0 | 1450.0 |
| Նոյեմբերյան     |   |      |       |       |       |    |       | 100.0 | 8340.0 | 600.0  |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. հունիսին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 406 առուվաճառքի գործարքներ, որից 155-ը՝ աճուրդային վաճառքներ, 2-ը՝ ուղղակի վաճառքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների |               |  |              |        | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների |               |   |              |        |
|---------------------------------------|--|---------------|--|--------------|--------|--|---------------|---|--------------|--------|
|                                       | Քանակը   | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |        | Քանակը   | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/ |              |        |
|                                       |  |               | Նվազագույն   | Առավելագույն | Միջին  |  |               | Նվազագույն  | Առավելագույն | Միջին  |
| Արագածոտնի մարզ                       |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Աշտարակ                               |  |               |  |              |        | 28   | 25750.0       | 250.0   | 8000.0       | 2800.0 |
| Ապարան                                |  |               |  |              |        |  |               | 250.0   | 1400.0       | 340.0  |
| Թալին                                 | 1  | 78.0          | 2232.0   | 2232.0       | 2232.0 |  |               | 100.0   | 800.0        | 130.0  |
| Ծաղկահովիտ                            |  |               |  |              |        |  |               | 100.0   | 800.0        | 140.0  |
| Արարատի մարզ                          |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Արտաշատ                               | 47   | 47702.0       | 310.0  | 470.0        | 390.0  | 10   | 8240.0        | 300.0   | 6000.0       | 860.0  |
| Մասիս                                 | 24   | 21320.0       | 210.0  | 1055.0       | 558.0  | 31   | 24430.0       | 300.0   | 20000.0      | 1100.0 |
| Վեդի                                  | 72   | 80400.0       | 132.0  | 475.0        | 332.0  | 3  | 2699.0        | 250.0   | 2200.0       | 640.0  |
| Արմավիրի մարզ                         |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Արմավիր                               |  |               |  |              |        | 4  | 3100.0        | 300.0   | 5000.0       | 980.0  |
| Բաղրամյան                             |  |               |  |              |        | 1  | 1200.0        | 180.0   | 600.0        | 210.0  |
| Վաղարշապատ                            |  |               |  |              |        | 22   | 20608.0       | 300.0   | 10000.0      | 1520.0 |
| Գեղարքունիքի մարզ                     |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Գավառ                                 |  |               |  |              |        | 1  | 880.0         | 300.0   | 2000.0       | 600.0  |
| Ճամբարակ                              |  |               |  |              |        |  |               | 100.0   | 300.0        | 140.0  |
| Մարտունի                              |  |               |  |              |        | 1  | 20.0          | 200.0   | 600.0        | 250.0  |
| Սևան                                  |  |               |  |              |        | 1  | 1200.0        | 200.0   | 2000.0       | 260.0  |
| Վարդենիս                              |  |               |  |              |        |  |               | 100.0   | 300.0        | 120.0  |
| Լոռու մարզ                            |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Ալավերդի                              |  |               |  |              |        |  |               | 150.0   | 600.0        | 210.0  |
| Գուգարք                               |  |               |  |              |        | 5  | 2782.0        | 150.0   | 5200.0       | 760.0  |
| Սպիտակ                                |  |               |  |              |        |  |               | 140.0   | 900.0        | 180.0  |
| Ստեփանավան                            |  |               |  |              |        |  |               | 100.0   | 600.0        | 160.0  |
| Տաշիր                                 |  |               |  |              |        | 1  | 1330.0        | 100.0   | 300.0        | 135.0  |
| Կոտայքի մարզ                          |  |               |  |              |        |  |               |   |              |        |
| Աբովյան                               |  |               |  |              |        | 56   | 51808.0       | 300.0   | 10000.0      | 1850.0 |



|                 |   |        |        |        |        |    |         |       |         |        |
|-----------------|---|--------|--------|--------|--------|----|---------|-------|---------|--------|
| Եղվարդ          |   |        |        |        |        | 60 | 67330.0 | 300.0 | 10000.0 | 2100.0 |
| Հրազդան         |   |        |        |        |        | 11 | 10437.0 | 300.0 | 8000.0  | 1480.0 |
| Շիրակի մարզ     |   |        |        |        |        |    |         |       |         |        |
| Ախուրյան        |   |        |        |        |        | 9  | 3624.6  | 250.0 | 3400.0  | 380.0  |
| Ամասիա          |   |        |        |        |        |    |         | 100.0 | 300.0   | 135.0  |
| Անի             |   |        |        |        |        |    |         | 150.0 | 400.0   | 185.0  |
| Աշոցք           |   |        |        |        |        |    |         | 90.0  | 300.0   | 120.0  |
| Արթիկ           | 1 | 30.0   | 4044.0 | 4044.0 | 4044.0 |    |         | 150.0 | 900.0   | 200.0  |
| Սյունիքի մարզ   |   |        |        |        |        |    |         |       |         |        |
| Գորիս           |   |        |        |        |        |    |         | 150.0 | 1200.0  | 390.0  |
| Կապան           |   |        |        |        |        |    |         | 150.0 | 1400.0  | 410.0  |
| Մեղրի           |   |        |        |        |        |    |         | 150.0 | 900.0   | 230.0  |
| Միսիան          |   |        |        |        |        |    |         | 150.0 | 900.0   | 250.0  |
| Վայոց Ձորի մարզ |   |        |        |        |        |    |         |       |         |        |
| Եղեգնաձոր       | 4 | 4800.0 | 85.0   | 85.0   | 85.0   |    |         | 150.0 | 2200.0  | 310.0  |
| Վայք            | 2 | 8560.0 | 515.0  | 725.0  | 620.0  |    |         | 170.0 | 1400.0  | 225.0  |
| Տավուշի մարզ    |   |        |        |        |        |    |         |       |         |        |
| Բերդ            |   |        |        |        |        |    |         | 100.0 | 1400.0  | 170.0  |
| Իջևան           | 4 | 2400.0 | 152.0  | 480.0  | 378.0  | 5  | 4470.0  | 150.0 | 2200.0  | 600.0  |
| Նոյեմբերյան     |   |        |        |        |        |    |         | 100.0 | 1400.0  | 210.0  |

2004թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 3.84 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 1-ը՝ Երևանում /0.20 հա/, 5-ը՝ Արարատի /1.93 հա/, 1-ը՝ Գեղարքունիքի /0.06 հա/, 1-ը՝ Շիրակի /1.30 հա/ և 1-ը՝ Տավուշի /0.36 հա/ մարզերում:

2004թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 820 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 31.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 14.0%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ՝ 25.0%-ով:

2004թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 63 բնակարանների, 24 անհատական բնակելի տների, 203 հասարակական, 24 արտադրական նշանակության օբյեկտների, 504 միավոր հողերի և 2 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. հունիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 50 վարձակալության գործարքների քանակները 2004թ. մայիսի համեմատ աճել են 11.1%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ նվազել՝ 74.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունիսին հանրապետությունում վարձակալվել են 1881.02հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 16.62 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1764.09հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 24.96 հա բնակավայրերի, 67.66 հա արդյունաբերական օբյեկտների, 7.69 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Կոտայքի մարզում՝ 448.57 հա, որից 447.90 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. հունիսին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 379.54 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

| <i>Մարզի անվանումը</i> | <i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i> |  | <i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի</i> |  |
|------------------------|---|--|--|--|
|                        | <i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>                         | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> | <i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>                          | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> |
| Արագածոտն              | 1   | 50.00                                      | 43   | 285.33                                     |
| Արարատ                 | 0   | 0.00                                       | 11   | 118.99                                     |
| Արմավիր                | 0   | 0.00                                       | 22   | 127.86                                     |
| Գեղարքունիք            | 1   | 3.00                                       | 21   | 22.61                                      |
| Լոռի                   | 0   | 0.00                                       | 32   | 149.30                                     |
| Վոտայք                 | 4   | 326.54                                     | 37   | 121.36                                     |
| Շիրակ                  | 0   | 0.00                                       | 19   | 100.35                                     |
| Սյունիք                | 0   | 0.00                                       | 12   | 117.95                                     |
| Վայոց Ձոր              | 0   | 0.00                                       | 50   | 333.80                                     |
| Տավուշ                 | 0   | 0.00                                       | 1  | 7.00                                       |
| <b>Ընդամենը</b>        | <b>6</b>  | <b>379.54</b>                              | <b>248</b>   | <b>1384.55</b>                             |

2004թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 632 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հունիսի համեմատ աճել է 65.9%-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 1.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 40.2 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /49.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.1%/ առանձնատների /13.9%/ և հողերի /11.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 355 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. մայիսի համեմատ աճել է 14.5%-ով, իսկ 2003թ. հունիսի համեմատ՝ 66.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 51.04 հա /այդ թվում 0.05 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 50.36 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Սյունիքի մարզում՝ 16.65 հա, որոնք գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2004թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 46 և 16 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.7%: 2003թ. հունիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 4.1անգամ, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 72.2%-ով: 2004թ. հունիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 58.0%:

2004թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1368 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. հունիսի համեմատ աճել է 71.4 %-ով, իսկ 2004թ. մայիսի համեմատ՝ 27.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /42.3%/:

## **ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն**